մէ թուղթը ստանալու առաջին կիւրակէին՝ անձամբ պատարագել, եւ Մայր Աթոռում կաթուղիկոսի անունը յիշատակելուց յետոյ, հրամանագրել Սինոդից որ յիշատակուի կաթուղիկոսի անունը բոլոր եկեղեցիներում:

---

Սինոդը կատարելով Կովկասու գլխաւոր Կառավարչի 1843 թ. Յունվարի 5 գրութեամբ առաջարկութիւնը նախնական սովորութեանց ու աւանդութեան եւ պօլօժենիայի տրամադրութեան համեմատ ընտրութեան կարգի մի հրահանգ է ծրագրում 41 յօդուածներով, որ նոյն թուի Փետրվարի 5 ին առաջարկումէ Կովկասու գլխաւոր կառավարչին ի հաստատութիւն յայտնելով որ—յիշեալ հրահանգութիւնը կազմելիս ինքը (Սինոդը) հետեւել է նախնեաց սովորութեանը, որին հաւան կըլինին Ռուսաստանի եւ Պարսկաստանի հայերը. իսկ Տաճկաստանցւոց համար գրումէ. «Իսկ որ ինչ վերաբերի առ հայս Տաճկաստանի եւ հոգեւորականութիւն նոցա, որովհետեւ ի վաղուց անտի կարտեալ են հաղորդակցութիւնք նոցա ընդ Էջմիածնի, վասն որոյ անյայտ է իսկութեամբ Սիւնհոդոսին ոչ այժմեան ոգի նոցա եւ ոչ եղանակ մտածմանց»: Յիշեալ հրահանգութիւնը սակաւ փոփոխութեամբ եւ յապաւմամբ հաստատումէ 19ն Ապրիլի 1843 թ. որ գնումենք այստեղ երգման օրինակի եւ ընտրութեան ձեւերի հետ:

---

## ԿԱՆՈՆՔ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

---

### ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անձանց, որք մասնակից են ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի.

Յօդ. 1. Ըստ զօրութեան 13. յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամաց հաստատեալ կարգադրութեանն ի 11 Մարտի 1836 ամի, յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին լինի ընդ ձեռն պատգամաւորաց, որք երկու երկու առաքին յիւրաքանչիւր վիճակաց՝ մին հոգեւորական և միւսն աշխարհական. պատգամաւորն եկեղեցական

պարտի լինել կամ նոյն ինքն Թեմակալ Առաջնորդն, կամ այլոք եկեղեցական նշանակեալ ի նմանէ. իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, ի Մելիքաց, ի Հարիւրապետաց և յայլոց պատուաւորագոյն աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ, որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմնի ծիսի այսր եկեղեցւոյ.

Յօդ. 2. Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք եթէ չկարասցեն ներկայանալ անձամբ ի վանս Էջմիածնի ցնշանակեալ ժամանակն վասն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւունս յայտնել գրութեամբ զգատողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սիւնհոդոսն Էջմիածնի.

Յօդ. 3. Բացի պատգամաւորաց, մասնակցին ընտրութեան Պատրիարգի ամենայն Անդամք Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի, և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին յԷջմիածին. իսկ ի դէպս պակասութեան եպիսկոպոսաց, զայն թիւ ընուն երիցագոյն վարդապետք տեղւոյն.

Յօդ. 4. Պրոկուրօրն Սիւնհոդոսին Էջմիածնի առաջիկայ գտանի յընտրութեան ծայրագոյն Պատրիարգին Էջմիածին յաղագս պահպանելոյ զկարգն և բացատրելոյ զկանոնս ընտրութեան ի դէպս ծագելոյ երկբայութեանց ի մասինս այսմիկ. (Կարգաքրոնն յաղագս Հայոց Պոլսէայց Եկեղեցոյ յօդ. 46.):

Ծանօթութիւն. Եթէ պատահեսցի, զի այսոքիկ երկբայութիւնք ընկալցին զեղանակ իմն անտեղի կարգին բարեկարգութեան, որք պարտին պահպանել ի ժամ ընտրութեանն, յայնժամ Թոյլատրի աւագագոյն Անդամոյ (կատարողի պաշտաման կաթուղիկոսին) յետաձգել զընտրութիւնն ցվաղն, ընկալեալ միանգամայն զչափու եղանակս համաձայնելոյ զծագեալ երբայութիւնսն.

Յօդ. 5. Ընտրութիւնն յառաջանայ յԷջմիածին ի Մայր Եկեղեցւոջ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին՝ ճիշտ պահպանութեամբ ծիսից սահմանադրելոց ի Լուսաւորչական եկեղեցին Հայոց առ այս՝ որք են այսոքիկ.

## ԳԼՈՒԽ Բ.

### Յաղագս նախընթաց կանոնաց. որք պարտին կատարել նախքան զընտրոնն.

Յօդ. 6. Ի գալ հասանիլ իւրաքանչիւր Թեմակալ առաջնորդի, Տեղակալ ատենապետի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի՝ Աւագագոյն Արքեպիսկոպոսն Տաճարին Էջմիածնի ընդառաջ առաքէ նմա զմի եպիսկոպոս և զերկուս վարդապետս, որք զկնի ողջունելոյն զնա ըստ պատշաճին, յուղարկաւորեն ի նշանակեալն նմա տեղի վասն բնակութեան. իսկ աշխարհական պատգամաւորացն ընդառաջ ելանէ ի Ղազարապատին Հիւրընկալն Աթոռոյս, զորս և զետեղէ ի նշանակեալ

վասն նոցա օթևանս ի նմին իսկ Ղազարապատի։ Հիւրընկալն Աթոռոյս արձանացուցանէ ի պատրաստեալն վասն այսորիկ ցուցակի զանուն իւրաքանչիւր եկեալ պատգամաւորին, նշանակելով ի նմին զօր գալըստեան նորա։

Յօդ. 7 Ի գալ հասանիլ ամենայն պատգամաւորացն հոգևորականաց և աշխարհականաց, և ի ստանալ գրաւոր գատողութեանցն հասուցեալ ց ի Սիւնհոդոսն և առաջադրութեամբ Տեառն գլխաւոր կառավարչին յայսկոյս Կովկասու կողմանց վասն բացման ժողովոյն, Հիւրընկալն Աթոռոյս մատուցանէ ի Սիւնհոդոսն զցուցակ անուանց եկեալ պատգամաւորացն, որ նոյն ժամայն նշանակէ զօր ընտրութեան Պատրիարք Կաթուղիկոսին և արարեալ վասն այսորիկ օրագրութիւն, զքաղուածն յայնմանէ տայ ի գործս Տեղակալի Ատենապետի Սիւնհոդոսին առ կախեալն ի նմանէ տնօրէնութիւն ի մասին կատարելոյ զսրբազնագործութիւնս, որք պարտին լինել այսու եղանակաւ։

Յօդ. 8. Վասն վարելոյ զգրաւոր գործս ժողովոյն Լուսաւորչական Սիւնհոդոսն Էջմիածնի նշանակէ զԱտենադպիրն իւր և զերկուս օգնականս նորա։

ԳԼՈՒԽ. Գ.

Յաղագս պարագայից՝ որ վասն ընդդունելոյ ընդ երիցագոյն կանգիտատաց

Յաղագս փոխարկելոյ ի նոցանէ զերիս կանգիտատս ի պաշտօն Ծայրագոյն Պատրիարքի։

Յօդ. 9. Նախքան զմատչելն յընտրութիւն երիցագոյն կանգիտատաց ի մէջ Տաճարին Էջմիածնի առաջի սեղանոյն Իշման Որդւոյն Միածնի պարտի լինել գրասեղան կարմիր չուխայապատ վասն առաջիկայ պատգամաւորացն և սահմանեալ թուոյ Հոգևորականացն ի Միաբանութենէ Աթոռոյն Էջմիածնի նաև յատուկ առանձին գրասեղան վասն Պրոկուրորի Սիւնհոդոսին Էջմիածնի։

Յօդ. 10 Ի վերայ յիշեալ գրասեղանին պարտին բազմեալ լինել խաչ և Աւետարան, և յերկուց կողմանց այնոցիկ մոմակալք արծաթի՝ վառեալք մոմովք. բաց յիրացս այսոցիկ դնին ի վերայ սեղանոյն 1) տպեալ կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի Ռուսաստան և կանոնքն վասն ընտրութեան Ծայրագոյն Կաթուղիկոսի։ 2) Հինգ ցուցակք ընտրութեան չորեքինքն ըստ ձևոցն, որ ընդ համար 1. և մին ըստ ձևոյն՝ որ ընդ համարաւ 2։ 3։ ցուցակ բոլոր պատգամաւորացն, որոց են իրաւունք ընտրութեան Ծայրագոյն Կաթուղիկոսի ըստ վաղեմնի ծիսի Լուսաւորչեան Հայոց եկեղեցւոյ (յօդ. 31.) 4. ցուցակ անուանց սահմանեալ թուոյ Հոգևորականացն ի Միաբանութենէ Աթոռոյն Էջմիածնի և եկեալ յընտրութիւն պատգամաւորացն։ 5։ Դատողութիւնք պատգամաւորացն։ որք ոչ

կարեն առաջիկայ գտանել անձամբ ի ժամ ընտրութեանն։ 6, Ցուցակ անուանց պատգամաւորացն, որք թէպէտ և պարտէին ներկայ գտանիլ ի ժողովին, այլ չեն եկեալ անդր և չեն հասուցեալ ի Սիւնհոդոսն զդատողութիւնս իւրեանց. և վերջապէս 7, Առաջադրութիւն գլխաւոր կառավարչին յայսկոյս Կովկասու կողմանց յաղագս բացման ժողովոյն։

## ԳԼՈՒԽ Դ.

### Յաղագս կարգին պարապմանց ժողովոյն։

Յօդ. 11. Ի նշանակեալ աւուրն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին պատգամաւորքն ժողովին, իններորդում ժամու առաւօտեան պահու ի Վեհարանն կաթուղիկոսական, ուրանօր ցուցանեն նոցա ընդունելութիւն Աւագագոյնն յԵպիսկոպոս Տաճարին Էջմիածնի և միւս Անդամք Սիւնհոդոսին, զոյգ ընդ սմին Աւագագոյն Եպիսկոպոսն հրաւիրէ զժողովականսն գնալ յեկեղեցին ի լուր սրբոյ Պատարագի և գոհացողական մաղթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և բոլոր Օգոստափառ Տան Նորա և յաղագս երդումն տալոյ աշխարհական պատգամաւորացն վասն պահպանելոյ զկարգն և զանաչառութիւն յառաջիկայ գործին։

Ծանօթութիւն. Հոգևորականքն ոչ երդնուն, այնու դիտաւորութեամբ, թէ պարտին նոքա կատարել զայնոսիկ կանոնս համաձայն Սրբազան կոչման իւրեանց։

Յօդ. 12. Ընթացք ի Տաճարն կարգին սովին եղանակաւ. Առաջի բոլոր հանդիսին գնայ կատարող պաշտաման կաթուղիկոսին (նախագահ Անդամ Սիւնհոդոսին)։ Զկնի որոյ պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմայ և Կոստանդնուպօլսոյ. զկնի նոցա ջուխտակ գնան յաջ կողմն կոյս Անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթն Վրիցագոյն Եպիսկոպոսունք տեղւոյն, ընթացակցեալ Պրօկուրօրի Սիւնհոդոսին, իսկ ի ձախակողմն Թէմական Առաջնորդք կամ պատգամաւորք նոցա նոյնպէս ջուխտակ կարգաւ ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրաքանչիւրոց ի նոցանէ. և ապա աշխարհական պատգամաւորքն նովին իսկ կարգաւն ըստ աւագութեան քաղաքացն։ Եւ վերջապէս զընթացս գնացիցն եղրափակէ Ատենադպիրն Սիւնհոդոսի Էջմիածնի։

Ծանօթութիւն. Ի դէպս անբարեյաջող եղանակի փոխարկիայս հանդէս ընթացիցի, և Պատգամաւորքն ըստ հրաւիրանաց Աւագագոյն Եպիսկոպոսին և Պրօկուրօրի Սիւնհոդոսին Էջմիածնի գնան ի կաթուղիկոսական Վեհարանէն յեկեղեցին առանց պահպանելոյ զծէսն վերտառեալ։

Յօդ. 13. Զպատարագն սուրբ և զգոհացողական մաղթանս մատուցանէ հանդիսիւ Աւագագոյն եպիսկոպոսն Տաճարին Էջմիածնի. իսկ ի

վախճան սրրոյ Պատարագի և գոհաբերեալ մեղքիցն վասն ելիցեն բուսեան կենաց ԴԱՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾԱՒԻՒԹԵԱՆ և Հանդերձ Օգոստափառ տոհմին նորա։ Աւագագոյն Եպիսկոպոսն յեկեղեցւոյն գամենայն առաջիկայ աշխարհաւոր պատգամաւորս ըստ սահմանեալոյ նեղոյն (նև 3)։ Ամենեքեան երգուցանէր սարգարէն գանուանս իւրեանց ի վերայ երդմնադիրացն։

Յոգ. 14. Ի միւսում աւուր զկնի կատարման այսր սիրոյ առաջիկայ եղեալքն և որոց են իրաւունք ընդարձիցեան Պատրիարքին Ռաբուղիկոսին ընդունիցեն զանգիս շուրջ զեկեղեալ առաջի սեղանոյ Նշանեալ որդւոյն Մրածնի գրաստեղանաւն։ (յոգ. 9։)։ Զմիջին սեղանն գրաստեղանին ընդունի կատարոցն պաշտաման կարգաւորիչքն։ Յետոյ գոյր պատգամաւորքն երիցուց պատարիարքաց։ և բոլոր Հոգեւորականքն, որոց են իրաւունք ընդարձիցեան Պատրիարքին Ռաբուղիկոսին ըստ աւանդութեան ձեռնադրութեանն նոցա։ թոյլ ի ձանձանիցին գոյր պատգամաւորքն աշխարհաւոր ըստ աւանդութեան գոչեսցեն թուրքանդրոյն ի նոցանէ։

Ծանոթութիւն։ Հոգեւորականքն որք ունին իրաւունս ձեռնադրել ի Ցաճարին ըստ ոչինչ հաւատոյ քրիստոնէի պահպանեն զիրաւունս և յայլս եռաց։ Լոկ պէս մինչ սրբոյն առնեն զրկանութիւնն կանգուն գանգեանաւն։

Յոգ. 15. Դանիրատն գամենեցուն։ Զիրկոգրոցն ի Հոգեւոր ատենարանաւորաց գորհանգաւորեալսն Զրքուց աւուր տարեւորեալոց ընդունեցեալ գասարանս սիրգուրիրեան և գաղանս ասնչանեալս գնան պարտի ըստ Լեւոնաւորեան Եղեգեցոյ։ Հաւոր ապա Հոգի Հոգեւոր ատենարանաւորն Եղեգեցոյ գասարանս տասնչեալ ընդունեալեն գրեալ։ Յորում՝ յանգամեան գաղուկանեցոյ մոգոնիկանցն գեանգարիեն գրեալ։ Զի՝ ասա որ գասարանաց են՝ գաղան Եղեգեցոյ և գրեանգարիեն։ Զի՝ ասա որ գասարանաց են՝ գաղան Եղեգեցոյ։ Զի՝ գրեանգարիեն։ Զի՝ ասա որ գասարանաց են՝ գաղան Եղեգեցոյ։ Զի՝ գրեանգարիեն։

թիւն իւր վասն Աւագագոյն Կանդիտատացն աղատօրէն ըստ ուղիղ հասկացողութեան իւրում և ըստ մտքուր խղճի մտացն առանց իրիք երկիւղի, և ոչ հայելով ընաւին յոչինչ օտարոտի առաջարկութիւն ինչ և կամ ի մասնաւոր նամակագրութիւնս, թէ և իցեն այնոքիկ յաւագագունիցն յաղգէն Հայոց։ Ամենայն ոք վարի այնպէս, որպէս զի կարասցէ պատասխանի տալ վասն ամենայնի առաջի Տեառն Աստուծոյ։ Ուստի և իւրաքանչիւր ոք ի բաց հերքելով յինքենէ զամենայն յամառումն կարծեաց կամակորութեան եւ զանձնական ակնկալութիւնս, ջան դնէ տեսանել ի հասարակաց դատողութեան զհաստատուն հիմնաւորութիւն ճշմարտութեան։

Յօդ 17. Իւրաքանչիւր Անդամ Ժողովոյն ի տալն զիւր կարծիս, պարտի խօսել համառօտ, պարզ և մեկին բանիւք՝ ոչ հեռանալով յառաջիկայ առարկայէն յանդիման առնել նախ զարժանիս Հոգեւոր Ատիճանաւորին, զորմէ առաջարկէ նա, ապա զիաստս ապացուցութեանց վերջապէս և զայն թէ որում օգտի ակն ունի ինմանէ վասն եկեղեցւոյն։

Յօդ. 18. Ի ժամ յայտնութեան դատողութեանցն, որք սկսանին ի կրտսերագունէն և կարգաւ հասանին առ երիցագոյնն, չէ պարտ ումիք խղել զբանս այլոյ, կամ խառնիլ ի խօսս նորա մինչև է աւարտեալ նա զիւրն առաջադրութիւն։ Յայտնեալ դատողութիւնքն նոյն ժամայն ի գիր արձանացուցանին ի Պրոկուրորէն, և յետոյ ընթեռնուն ի ձայն և վաւերացուցանին յանդամոյն որ տուեալ զայն դատողութիւն։

Յօդ. 19. Պատգամաւորն եկեալ Էջմիածին, որ ի պատճառս հիւանդութեան կամ այլոց անակնուելի դիպուածոց ոչ կարէ ներկայ գտանիլ ի ժողովի անդ, պարտաւորի հասուցանել նմին զիւր գրաւոր դատողութիւն ոչ յետաձգելով զայն առ վաղիւն։ զնոյնն պարտին կատարել և անդամք Սինհոդոսին Էջմիածնի, եթէ ոք ի նոցանէ ոչ մարթասցի անձամբ ներկայ գտանիլ ի ժողովին ըստ անակնուելի դիպուածոց։ այլ աղատ են ի տալոյ զկարծիս իւրեանց այնոքիկ յեկեալ պատգամաւորացն, որք ի պատճառս հիւանդութեան կատարելապէս անկարանան առաջիկայ գտանել և տալ զդատողութիւնս ըստ առաջիկայ գործոյն։

Յօդ. 20. Զայնք ամենայն Անդամոց ժողովոյն հաւասար են միմեանց։

Յօդ. 21. Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն և հասուցեալոյ գրաւոր դատողութեանց հասելոց ի Սինհոդոսն ըստ զօրութեան 10 յօդուածոյն չորեքին աւագագոյն կարգաւորք ըստ առաւելութեան ձայնիցն տուելոց ի նպաստ իւրեանց, ճանաչին ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ ի կանդիտատ իսկ ի զէպս հաւասարութեան ձայնիցն, վիճակն որոշեսցէ թէ ո՞յք պարտին համարիլ աւագագոյնք։

Ծանօթութիւն. գրաւոր դատողութիւնք բացակայ պատգամաւորաց պարտին ընդունիլ ի հաշիւ համաձայն ձայնից ներկայ պատգամաւորացն յօգուտ այնորիկ անձին, զոր նշանակեալ են ի դատողութիւնսն յայնոսիկ։

## ԳԼՈՒԽ. Ե.

### Յաղագս ընտրութեան Երկոց կանդիտատաց յԱստիճան Տայրագոյն Պատրիարքի Կաթուղիկոսի:

Յօդ. 22. Ի միւսում կամ յերրորդում աւուր ի չորից վերոյգրեալ աւագագոյն Կանդիտատաց անտի բոլոր առաջիկայ ժողովականքն ընտրեն զերկուս Կանդիտատս յԱստիճան Տայրագոյն Պատրիարքի.

Յօդ. 23. Ընտրութիւնն լինի յայտնութեամբ դատողութեանց այսու կարգաւ.

Յօդ. 24. Զկնի ընթեռնլոյ զպատշաճաւոր աղօթս և արտասանելոյն զհամառօտ բան համաձայն այնմ, որպէս յիշատակի ի վեր անդր ի 15. յօդ. ի ձայն ծանուցանի Ժողովոյն անուն առաջնոյն ի չորից աւագագոյն Կանդիտատացն.

Յօդ. 25. Ի ծանուցանել անուան Կանդիտատին, իւրաքանչիւր ոք ի ներկայ եղեալ Անդամոցն, որոց են իրաւունք ընտրութեան, յայտնէ ի ձայն թէ՝ արժանի համարի՞ արդեաք զառաջադրեալ անձն աստիճանի Տայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին թէ՝ ոչ. այս արժանաւորումն արտասանի միով բանիւ. ընտրեմ, կամ ոչ ընտրեմ. տուչութիւն ձայնից սկսանի ի կրտսերագոյն աշխարհական պատգամաւորացն, և այսու եղանակաւ հասանէ առ աւագագոյնսն, նոյնպէս՝ որպէս յիշատակի ի վեր անդր ի 18 յօդուածին.

Ծանութիւն. Դատողութիւնք բացակայ պատգամաւորաց ոչ ընդունին ի հաշիւ ձայնիցն, զի որովհետեւ ըստ զօրութեան 17 յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՒՆ կամաք հաստատեալ ի 1836 ամի կարգադրութեանն յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւնն պարտի լինել միայն յառաջիկայ պատգամաւորացն.

Յօդ. 26. Կանդիտատն որոյ վասն լինի ընտրութիւնն՝ ինքն ոչ տայ զձայն.

Յօդ. 27. Ձայն իւրաքանչիւր Անդամոցն Ժողովոյն զկնի յայտնելոյ զայն, ի գիր արձանացուցանի ի Պրոկուրորքէն ի ցուցակին ընտրութեան և վաւերացուցանի սեփական ստորագրութեամբ Անդամոյն. ի տալ բոլոր առաջիկայ Անդամոց զձայնս, ցուցակն մատուցանի նախագահ Անդամոյ Ժողովոյն, որ համարեալ զձայնս ընտրողականս և զանընտրողականս առանձինն առանձին, նշանակէ զթիւ այնոցիկ ի պատշաճեալ գաւազանին ընտրողական ցուցակի ընդ համարաւ 2. յանդիման անուան կանդիտատին, որոյ վասն եղեալ է ընտրութիւնն.

Յօդ. 28. Մինչ ընտրութիւնն լինի վասն աւագագոյն Հոգևորական Անդամոյն, որ Ատենապետ է Ժողովոյն, յայնժամ համարէ զձայնս, անցուցանէ զայնոսիկ ընդ ցուցակ և այլն որպէս նշանակեալն է ի 27 յօդուածին. աւագագոյնն զկնի նորա յառաջիկայ Հոգևորականաց.

Յօդ. 29. Զկնի կատարման ծիսի ընտրութեանն ի ձայն ընթեռնու զցուցակն չորից ընտրեալ կանդիտատաց, յորոց երկոքին՝ որք ստացեալ են զառաւելութիւն ձայնից, ճանաչին կանդիտատ յԱստիճան Ծայրագոյն Պատրիարքի.

Յօդ. 30. Ի ցուցակին ընտրողական չորից Աւագագոյն կանդիտատաց նշանակի յանդիման երկոցունցն ի նոցանէ թէ՝ նոքա ըստ առաւելութեան ձայնիցն տուելոց ի նպաստ նոցա, արժանացուցեալ լինին կանդիտատ ի կոչումն Ծայրագոյն Պատրիարքի. Այս ցուցակ ընտրողական ստորագրի ի բոլոր Անդամոց Ժողովոյն, որք մասնակից են լեալ յընտրութեան անդ. վաւերացուցանի ի Պրոկուրորէն և առաջի առնի ըստ պատկանելումն. Պատճէն յիշեալ ցուցակին ստորագրութեամբ Անդամոց Սիւնհոդոսին Էջմիածնի և վաւերութեամբ Ատենադպրի սորին մընայ ի գործս Սիւնհոդոսին Էջմիածնի.

Յօդ. 31. Բացի ստորագրեալ ընտրողական ցուցակէն պատրաստի և առանձին օրագրութիւն վասն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին յերկուս հատորս, որք ստորագրին ի բոլոր ժողովականացն և վաւերացուցանին յԱտենադպրէ Սիւնհոդոսին Էջմիածնի. Մին յայնցանէ առաջի առնի ըստ պատկանելումն. իսկ միւսն մնայ ի գործս Սիւնհոդոսին.

Յօդ. 32. Ցընթացս բոլոր ժամանակին ներգործութեանց ժողովոյն, Ատենակալութիւնք այնորիկ լինին ի տուունջեան սկսեալ յիններորդ ժամու առաւօտեան ցերկրորդ ժամն զկնի միջօրէի, իսկ ընդ երեկոյս ոչ լինին Ատենակալութիւնք.

Յօդ. 33. Ցաւարտ ընտրութեան և զկնի ստորագրելոյ յերկուս հատորս զցուցակն ընտրութեան և զառանձին օրագրութիւնն վասն ընտրութեան, Ժողովն առաքէ զպատգամաւորութիւն յերից անդամոց իւրոց ի միոյ հոգևորականէ և յերկուց աշխարհականաց առ գլխաւոր կառավարիչն յայսկոյս Կովկասու կողմանց, առ ապագայ տնօրէնութիւն նորա համաձայն 18 յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՑՆ կամաք հաստատեալ կարգադրութեանն ի 11 Մարտի 1836 ամի յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան.

---

ԱՌ ՅՕԴՈՒԱԾ 17.

## ՕՐԻՆԱԿ ԵՐԴՄԱՆ.

«Ես ի ներքոյ անուանեալս խոստանամ և երդնում յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի սրբոյ Աւետարանի Նորա առ այն թէ ցանկամ և պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց վասն գլխաւոր կառավարութեան սրբոյ Լուսաւորչեան Եկեղեցւոյ Հայոց և ծայրագոյն տեսչութեան ե-

կեղեցականաց Նորին ըստ մաքուր խղճի մտացս և պատուոյս առանց իրիք աչառութեան և սեպհական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մախանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ կապս մերձաւորութեան և բարեկամութեան ընտրել ի միջոյ հոգևորականաց հայրենի եկեղեցւոյ իմոյ զայնպիսի անձն, զոր և ըստ բարեմասնութեանց հանճարոյն և խղճի մտացն առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիմ ես և յորմէ ակն ունիմ զի նա ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զոր դնէ ի վերայ նորա այս վեհ աստիճան հոգևոր, հանդիսացուսցէ զինքն ջերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և յանձն եղեալ հայրապետական իշխանութեան Նորա բանաւոր հօտին Քրիստոսի։ Իսկ եթէ այլազգ ընթացայ, յայնժամ իրրև անհոգ ոմն օգտին եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց այնորիկ, յորում կայանայ և սեպհական օգուտն իմ, ենթադրեմ զանձնս մեղաւորանաց եղբայրակցաց իմոց, իսկ ի հանդերձելումն՝ պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի Նորա։ ի վախճան երդմանս վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զբանս և զխաչ Փրկչին իմոյ ամէն։»

---

# ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԵՐ։

—

## Կանդիտատի ընտրութիւն։

| | Պ—ՏԷՆ. |
|---|---|
| Ձեւ ընդ համարաւ 2։ առ յօդ 10։ | |

Ընտրողական ցուցակ վասն ընտրելոյ զ (այս անուն) կանդիտատ յաստիճան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի

| Թիւ | Անուանք ներկայ եղեալ անդամոց ժողովոյն որոց են իրաւունք ընտրութեան | Զայն յայտնեալ յիւրաքանչիւրոց ինոցանէ |
|---|---|---|
| | (այս անուն) | ընտրէ |
| | (այս անուն) | ոչ ընտրէ և այլն։ |

## Կաթուղիկոսի ընտրութիւն.

### Զեւ ընդ համարաւ 1. առ յօդ. 10.

Ցուցակ Աւագագոյն կանդիտատաց նշանակելոց յընտրութիւն յԱստիճան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

| Թիւ կանոնաց ազգային | Աստիճան հոգևորականին պաշտօն և անուն նորա. | Թիւ ընտրողաց դիմաց: | Թիւ ոչ ընտրողաց դիմաց: | Աստանօր նշանակի թէ ով ոք ի նոցանէ ըստ առաւելութեան ձայնից համարի կանդիտատ ի կոչումն Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի. |
|---|---|---|---|---|
| 1. | Արքեպիսկոպոս Ներսէս թեմական առաջնորդ Ռեսարարիոյ. | քսան և վեց | | Ի սոցանէ Արքեպիսկոպոս Ներսէս և Արքեպիսկոպոս Զաքարիա ըստ առաւելութեան ձայնից տուելոց ի նպաստ նոցա համարին աւագագոյն կանդիտատք յաստիճան Կաթուղիկոսի ամենայն Հայոց. |
| 2. | Արքեպիսկոպոս Զաքարիա պատրիարք Երուսաղէմայ. | տասն և եօթն | ինն | |
| 3. | Արքեպիսկոպոս Կարապետ նախկին պատրիարք Կ. Պոլսոյ. | երեք | քսան և երեք | |
| 4. | Արքեպիսկոպոս Պօղոս նախկին առաջ. Զմիւռնիոյ. | տասն և մի | տասն և հինգ | |

Ըստ գրուածոյս կատարուեց Ներսէսի ընտրութիւնը. թէեւ ընտրուած Կաթուղիկոսին ընդունելու ձեւը ցուցակագրուած է, բայց այս անգամ մէջ չեմ բերում: Պոլսոյ Ժողովականից յետոյ եղած ընտրութիւնները համառօտելուց յետոյ, մի առանձին գլխով կը համառօտենք Կաթուղիկոսի ընդունելութիւնը, եւ հանդիսաւոր օծումն:

Ցուսիկ Վարդապետ.